

## ՀՈՐՊԱՆԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1967Թ. ԱՐԱԲԱ - ԻՍՐԱԵԼԵՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

### Դ. Ա. ՎԻՐԱԲՅԱՆ

1967թ. արաբա-իսրայելյան պատերազմի ժամանակ, Եգիպտոսի և Սիրիայի հետ միասնական ճակատով Հորդանանի հանդես գալը փոքր-ինչ առեղծվածային էր, եթե հաշվի առնենք, որ XX դ. 60-ական թթ. համարվում են միջարաբական սառը պատերազմի տարիներ, երբ սուր հակասություն էր առաջացել մի կողմից արաբական «առաջադեմ» հանրապետությունների (Եգիպտոս և Սիրիա), իսկ մյուս կողմից՝ «հետադեմ» միապետությունների (Հորդանան և Սաուդյան Արաբիա) միջև: Հորդանանի դեպքում հարցը բարդանում էր այն առումով, որ թագավորության բնակչության մեծամասնություն կազմող պաղեստինցիներին թե՛ Եգիպտոսը և թե՛ Սիրիան ամեն կերպ հրահրում էին Հորդանանում վարչակարգի փոփոխման: Մյուս կողմից՝ դեռևս 1948-49թթ. արաբա-իսրայելյան առաջին պատերազմից անմիջապես հետո, տեղի ունեցան հորդանանա-իսրայելյան գաղտնի հանդիպումներ: Այդպես, մինչ վեցօրյա պատերազմը՝ 1963թ. ապրիլին, երբ Հորդանանում տեղի էին ունենում պաղեստինցիների ցույցեր, Հուսեյն թագավորը վախենալով, որ իրավիճակը դուրս կգա վերահսկողությունից, դիմեց անգլիացիներին՝ խնդրելով կազմակերպել գաղտնի հանդիպում իսրայելյան կողմի հետ:

Այդ հանդիպումը տեղի ունեցավ անգլիական գաղտնի ծառայությունների հետ սերտորեն համագործակցող անգլիացի բժիշկ Էմանուիլ Լեբբերտի՝ Լոնդոնի Դեվոնշիր փողոցի վրա գտնվող մասնավոր կլինիկայում: Այնուհետև 1965թ. Փարիզում Հուսեյնի և Գոլդա Մեյերի միջև նույնպիսի հանդիպում տեղի ունեցավ նաև Մեյերի ընկերուհու տանը: Հանդիպման ընթացքում Հորդանանի թագավորը Մեյերին հասկացրեց, որ իր բանակին անհրաժեշտ են տանկեր<sup>1</sup>, բայց միաժամանակ վստահեցրեց, որ դրանք չեն օգտագործվի Իսրայելի դեմ<sup>2</sup>: Միշտ է, Հուսեյնը ստացա՛վ իր բանակին անհրաժեշտ տանկերը, սակայն 1967թ. պատերազմի ժամանակ նա դրժեց իր խոստումը<sup>3</sup>:

Բացի դրանից, պատերազմի նախօրեին Իսրայելի վարչապետ Լևի Էշկոլը Երուսաղեմում ՄԱԿ-ի ներկայացուցչի միջոցով Հուսեյն թագավորին առաջարկեց ձեռնպահ մնալ ռազմական գործողություններից՝ մինևույն ժամանակ նախազգուշացնելով, որ Հորդանանի այլ դիրքորոշման դեպքում Իսրայելը անմիջապես կարձագանքի իր ռազմական ամբողջ ներուժով<sup>4</sup>: Հայտնի է, որ այդ «նախազգուշացումը» հասավ Հուսեյնին, երբ հորդանանյան ուժաբազորները

<sup>1</sup> Տե՛ս Կ. Капитонов, Как Иордания и Израиль шли к миру, "Московские Новости", № 52, 30.10 - 6.11.1994թ.:

<sup>2</sup> Խոսքը ոչ թե Իսրայելի, այլ ԱՄՆ-ի կողմից տանկերի տրամադրման մասին է: Մինևույն ժամանակ Իսրայելից պահանջվում էր աղմուկ չբարձրացնել տարածաշրջանում զինված ուժերի հավասարակշռության խախտման մասին:

<sup>3</sup> Հորդանանյան երկու տանկային բրիգադներ, որոնցից մեկը՝ տեղակայված Հորդանան գետի վրայով անցնող Դամիյե կամրջի մոտ, իսկ մյուսը՝ Երիթրվում, ռազմական գործողություններ ծավալեցին իսրայելցիների դեմ:

<sup>4</sup> Տե՛ս "The Hashemite Kingdom of Jordan and the West Bank", New York, 1977, էջ 45:

ուղևորվում էին դեպի իսրայելյան դիրքերը<sup>5</sup>, և չնայած որ թագավորը մերժեց այդ առաջարկը՝ հունիսի 5-ին իսրայելյան զորամիավորումները հորդանանցի-ների դեմ իրենց գործողություններում առժամանակ պահպանում էին «զգուշա-վորություն»<sup>6</sup>:

2 նայած Հորդանանի նկատմամբ Իսրայելի ցուցաբերած հատուկ վերաբերմունքին՝ հարկ է նշել, որ 1967թ.՝ արաբա-իսրայելյան պատերազմից առաջ, Իսրայելի հյուսիսային և հարավային մասերն իրար էին միանում Միջերկրա-կան ծովի ափով ձգվող նեղ տարածքով, ուր գտնվում էր երկրի մայրաքաղաք Թել Ավիվը: Հրեաներն իրենք այդ մասը անվանում էին «պարանոց»՝ քաջ հաս-կանալով, որ ռազմական ցանկացած բախման ժամանակ արաբները հեշտու-թյամբ կարող էին գրավել այն, որով կկտրվեր երկրի հյուսիսի և հարավի կա-պը: Ըստ այդմ, իսրայելյան ռազմական հրամանատարությունը վաղօրոք մշա-կել էր «Դալեթ»<sup>8</sup> ծրագիրը, որը վերաբերում էր Երուսաղեմի և «Սամարիայի» գրավմանը: 1967թ. հունիսյան պատերազմը փաստորեն իսրայելիցիներին տվեց այդ ծրագրի իրագործման հնարավորություն: Իսկ դա ակնհայտորեն հակա-սում էր իսրայելիցիների՝ Հորդանանին արված առաջարկին:

Ինչ վերաբերում է պատերազմի ձևական պատճառներին, ապա 1967թ. պատերազմից դեռ շատ առաջ Իսրայելի կառավարությունը միակողմանի որո-շել էր տեղափոխել Հորդանան գետի ջրերը: Ըստ այդմ՝ կազմվել էր Հորդա-նան-Նեգև նախագիծը, որով նախատեսվում էր տարեկան տեղափոխել շուրջ 320 մլն մ<sup>3</sup> ջուր: Այդ նպատակով կատարվելիք շինարարական աշխատանքնե-րը պետք է ավարտվեին 1964թ.: ԱՄՆ-ը, ձգտելով հիմնովին հաստատվել տա-րածաշրջանում և վարել հավասարակշռված քաղաքականություն, առաջար-կում է ջրերի արդարացի բաշխման իր նախագիծը, որը, սակայն, արաբները, ելնելով քաղաքական նկատառումներից, 1955թ. մերժեցին<sup>9</sup>: 1964թ. մարտի կե-սերին, երբ իսրայելիցիները նախատեսում էին այդ կառույցների գործարկումը, կահիրեում հրավիրվեց Արաբական երկրների լիգայի զագաթածողով, որտեղ որոշվեց ձեռնարկել հիշյալ ծրագրին հակակշիռ քայլեր, և այդ նպատակով ստեղծվեցին Հորդանանի վտակների շահագործման մարմինը, Միավորված զինվորական հրամանատարությունը և ՊԱԿ-ը: Սակայն այդ նորաստեղծ կա-ռույցները խիստ կարիք էին զգում թե՛ ֆինանսական միջոցների և թե՛ արաբա-կան երկրների կառուցողական համագործակցության<sup>10</sup>: ՊԱԿ-ի ստեղծմամբ պաղեստինցիներին տրվեց գրեթե սուվերեն կարգավիճակ, ինչը բավականին լուրջ վտանգ էր ներկայացնում Հորդանանի համար, որի կազմում էին գտնվում Պաղեստինի արաբական պետության համար ՄԱԿ-ի կողմից հատկացված ո-րոշ շրջաններ: Բացի այդ՝ որոշվեց եզիպտական և իրաքյան զորքերը տեղա-կայել Հորդանանում<sup>11</sup>: ԱՄՆ-ը իր հերթին ցանկանալով նպաստել Հորդանան գետի ջրերի շուրջ առաջացած խնդրի կարգավորմանը, նախաձեռնեց ծովային ջրերի աղագտման՝ «Ջուր խաղաղության համար» ԱՄՆ-Իսրայել համա-տեղ ծրագիրը<sup>12</sup>: Արաբներին սա կարծես զոհացրեց, սակայն իսրայելյան

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 32:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 45:

<sup>7</sup> Տե՛ս «Энциклопедия военного искусства, войны второй половины XX века», Минск, 1998, էջ 191:

<sup>8</sup> Տե՛ս В. Киселев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, М., 1988, էջ 104:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 90:

<sup>10</sup> Տե՛ս Malcolm H. Kerr, The Arab cold war, Gamal 'Abd al-Nasir and his Rivals, 1958-1978, London, Oxford, New York, 1972, էջ 125:

<sup>11</sup> Տե՛ս П. Кальвокоресси, Мировая политика после 1945 года, том I, М., 2000, էջ 482-483:

<sup>12</sup> Տե՛ս «Foreign Relations of the United States, 1964-1968, Volume XXXIV, Energy Diplomacy and Global Issues», Washington, 1999, էջ 264:

կողմի հետ ԱՄՆ-ի ունեցած անհամաձայնությունների պատճառով այն տա-  
պալվեց:

Ինչպես արդեն նշեցինք, ԱՄՆ-ն այդ տարիներին դեռևս փորձում էր տա-  
րածաշրջանում վարել հավասարակշռված քաղաքականություն: Ուստի 1967թ.  
արաբա-իսրայելյան պատերազմը ԱՄՆ-ը կողմից դիտվում էր լոկ որպես Ե-  
գիպտոսում անընդունելի, անզիջում վարչակարգի փոփոխում: Ըստ այդմ՝  
Ջեյմս Էնթրոֆի գլխավորած ԿՀՎ գործակալները Եփրոպայում գաղտնի հան-  
դիպում են իսրայելյան գաղտնի ծառայությունների՝ Մոսադի տնօրեն գեներալ  
Ամիթի և ռազմական հետախուզության՝ ԱՄԱՆ-ի ղեկավար բրիգադիր Յարի-  
վի հետ: Հանդիպման ժամանակ ամերիկացիները առաջարկեցին նախաձեռ-  
նել իսրայելյան հարձակում Եգիպտոսի վրա, որի բուն նպատակը կլիներ երկ-  
րի վարչակարգի փոփոխումը: Սակայն իսրայելցիները առաջարկեցին չբավա-  
րարվել միայն Եգիպտոսով, և, ի վերջո, ԱՄՆ-ի ներկայացուցիչները համա-  
ձայնեցին, որ կարևոր չէ, եթե պատերազմում ներգրավվեն այլ երկրներ, մաս-  
նավորապես Սիրիան և մի գուցե նաև Հորդանանը, քանի որ այդ ամենը կհա-  
մապատասխաներ տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերին: Այդպես, ԱՄՆ-ը, ա-  
ջակցելով Իսրայելի ռազմական գործողություններին ընդդեմ Սիրիայի և Ե-  
գիպտոսի և հաշվի առնելով պատերազմին բնորոշ տրամաբանությունը, հա-  
մաձայնեց նաև պատերազմին Հորդանանի ներգրավման հնարավորությա-  
նը<sup>13</sup>: Արդյունքում Իսրայելը ստացավ ամբողջ Երուսաղեմը և Արևմտյան ափը  
գրավելու հնարավորություն, չնայած դա հիմնովին համաձայնեցված չէր վա-  
շինգտոնի հետ:

Հունիսյան պատերազմին Հորդանանի մասնակցությունը մեծապես պայ-  
մանավորված էր Եգիպտոսի նախագահ Նասերի գործունեությամբ: 1960-ա-  
կան թթ., երբ բավական ժամանակ էր անցել 1956թ. Սուեզի ճգնաժամից, Նա-  
սերը սկսում է կորցնել իր հեղինակությունը արաբական աշխարհում: Զգտելով  
վերականգնել այն՝ նա ձեռնամուխ է լինում մի շարք քայլերի, որոնցից մեկը ե-  
ղավ 1964թ. եգիպտա-հորդանանյան հարաբերությունների մերձեցումը: Այնու-  
հետև 1967թ. մայիսին նա խնդրեց ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը դուրս բերել  
Սինայի թերակղզուց: Խճորանքը բավարարելուց անմիջապես հետո եգիպտա-  
ցիները իսրայելցիների համար փակեցին նավագնացությունը Տիրանայի նե-  
ղուցով: Հուսելն թագավորը, տեսնելով, որ պատերազմը դառնում է անխուսա-  
փելի, առաջարկեց Նասերին կնքել ռազմական դաշինք, որը և ստորագրվեց  
մայիսի 30-ին: Գնալով այդ քայլին՝ Հուսելնը դավաճանեց մինչ այդ Սաուդյան  
Արաբիայի հետ կնքած իսլամական պակտին, որը ստեղծվել էր նույն Եգիպտո-  
սի և Սիրիայի կողմից «հեղափոխության և սոցիալիզմի» արտահանմանը դի-  
մակայելու համար՝ փոխարենը ստանալով Նասերի՝ արաբ ազգի «հոր» հովա-  
նավորությունը: Ըստ երևույթին Հուսելնը այլ կերպ չէր էլ կարող վարվել, քա-  
նի որ եթե նա չմիանար Նասերին, և պատերազմի արդյունքում արաբները  
հայտնվեին հաղթողի դերում, ապա նա լիովին կմատնվեր նրանց քմահաճույ-  
քին, և հավանաբար վերջ կդրվեր Հորդանանի միապետական վարչակարգին:  
Իսկ հակառակ դեպքում, ցուցաբերելով արաբական համերաշխություն և ձեր-  
բազատվելով Իսրայելի «դաշնակցի» պիտակից, թեկուզև կրելով որոշակի կո-  
րուստներ, Հուսելնը հնարավորություն կունենար պահպանել իր գահը: Իրա-  
դարձությունները այդպես էլ զարգացան. Հորդանանը կորցրեց Արևելյան Ե-  
րուսաղեմը և Արևմտյան ափը, սակայն երկրում պահպանվեց Հաշիմյանների  
միապետական վարչակարգը<sup>14</sup>: Եգիպտա-հորդանանյան վերոնշյալ համաձայ-  
նագրով հորդանանյան զորամիավորումներն անցան եգիպտական զեներալ

<sup>13</sup> Տե՛ս Լ. Медведко, Этот Ближний бурлящий Восток, М., 1985, էջ 72:

<sup>14</sup> Տե՛ս Malcolm H. Kerr, The Arab Cold War, Gamal 'Abd al-Nasir and his Rivals, 1958-1978, London Oxford New York, 1972, էջ 128:

Աբդուլ-Մոնեմիմ Ռիադի հրամանատարության ներքո<sup>15</sup>։ Բացի դրանից՝ պատերազմի նախօրեին Հորդանան տեղափոխվեցին հավելյալ եզրպատակաճ զորամիավորումներ<sup>16</sup>։ Իսկ 1967թ. հունիսի 4-ին Հորդանանի և Եգիպտոսի ռազմական դաշինքին միացավ նաև Իրաքը<sup>17</sup>, որի մեկ զրահատանկային բրիգադ տեղակայվեց Հորդանանի հյուսիսում գտնվող Մաֆրակ շրջանում<sup>18</sup>։ Նշենք, որ այս զորամիավորումների տեղաշարժերը Իսրայելի կառավարության նիստի ժամանակ վերոնշյալ Ամիթն և Յարիվը գնահատեցին «չափազանց վտանգավոր» Իսրայելի Պետության համար<sup>19</sup>։

1967թ. պատերազմին նախորդած միջարարական «սառը պատերազմի» վառ արտացոլումներից էին Հորդանան-Սիրիա հարաբերությունները։ Սիրիական կառավարությունը ամեն կերպ աջակցում էր պաղեստինցի ազատամարտիկների՝ Իսրայելի դեմ ուղղված գործողություններին, սակայն այն դեպքում, երբ այդ հարձակումները տեղի էին ունենում ոչ թե Սիրիայի, այլ Լիբանանի և Հորդանանի տարածքներից<sup>20</sup>։ Նման հարձակումները հանգեցնում էին իսրայելյան պատասխան պատժիչ գործողությունների։ Այդպես, 1966թ. նոյեմբերի 13-ին, առաջնորդվելով «Վրեժ ՊԱԿ-ի ահաբեկչական գործողությունների դիմաց» կարգախոսով, իսրայելյան չորսհազարանոց մի զորամիավորում զրահամեքենաների ուղղեկցությամբ գրոհեց հորդանանյան Սամոա գյուղի վրա։ Չորսժամյա պատժիչ գործողությունից հետո, ջախջախելով օգնության հասած հորդանանյան զորախումբը, հրեա զինվորները վերադարձան Իսրայել։ Սակայն հիշյալ հարձակման մասին Հուսեյն թագավորը հաղորդել էր, որ երբ իսրայելցիները շրջապատեցին Սամոան, այնտեղ չկաին ՊԱԿ-ի գրոհայիներ։ Այս միջադեպից հետո Հուսեյնը բողոքեց, որ արաբական պետությունների դեկավարները չեն ցավակցում իրեն, այլ ընդհակառակը՝ մեղադրում, որ նա պետք է խոչընդոտեր պաղեստինցի գրոհայիներին պայքարել հարձակվողների դեմ<sup>21</sup>։ Այդ մեղադրանքները շուտով վերաճեցին պահանջի, որ Հուսեյնը ընդհանրապես արգելակի գրոհայիների պայքարը Իսրայելի դեմ։

Եվ ահա Հուսեյնը լիազորեց վարչապետ Վասֆի ալ-Թելիին հայտարարել, որ հորդանանյան իշխանությունները չեն հանդուրժի թագավորության տարածքից դեպի Իսրայել ռազմական խմբավորումների ինքնակամ ներթափանցումները, և որ Հորդանանը հետամուտ է արաբական երեք գազաթաժողովների ժամանակ ընդունված որոշումներին։ Նա նաև շեշտեց, որ Իսրայելի դեմ իրագործվող որևէ ռազմական գործողություն պետք է անպայման վերահսկվի Միացյալ արաբական գերագույն հրամանատարության կողմից, քանզի միայն այն է լիազորված որոշել, թե արդյոք նախաձեռնվող գործողությունը համապատասխանում է համաարաբական շահերին։ Միաժամանակ նշենք, որ Միացյալ հրամանատարությանը արաբական պետությունների իշխանությունների կողմից տրված էին ցուցումներ, համաձայն որոնց անհրաժեշտ էր զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք Իսրայելում կարող էին դիտվել որպես ռազմական գործողությունների ծավալման առիթ։ Նման հայտարարությունից հետո Արևելյան Երուսաղեմում տեղի ունեցան «Ֆաթահ»-ի և ՊԱԿ-ի կազմակերպած պաղեստինցիների բողոքի ցույցեր, որոնց մասնակիցները հորդանանյան իշխանություններից պահանջում էին պաղեստինյան ռազմական կազմա-

<sup>15</sup> Տե՛ս "Jordan, Keys to the Kingdom", Amman, 1995, էջ 19:

<sup>16</sup> Տե՛ս Ս. Кальвокоресси, նշվ. աշխ., էջ 487:

<sup>17</sup> Տե՛ս Дж. Гренвиль, История XX века, люди, события, факты, М., 1999, էջ 464:

<sup>18</sup> Տե՛ս Н. Оганесян, Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Ер., 1985, էջ 71:

<sup>19</sup> Տե՛ս Л. Медведко, նշվ. աշխ., էջ 90-91:

<sup>20</sup> Տե՛ս "Jordan, Keys to the Kingdom", էջ 19:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 19:

կերպությունների համար ապահովել գործելու ազատություն: 1966թ. նոյեմբերին Հուսեյն թագավորը ստիպված եղավ ուղղակի հարություն հայտարարել Երուսաղեմում<sup>22</sup>:

Հարկ է նշել, որ պաղեստինցիները, բուն նպատակ չդարձնելով նոր արաբա-իսրայելյան պատերազմի հրահրումը, այնուամենայնիվ լավ գիտակցում էին, որ իրենց գործողությունների հետևանքով այն դառնում է անխուսափելի: Այդ կապակցությամբ այն ժամանակներում «Ֆաթահ»-ի ղեկավար Յասեր Արաֆաթը խորհուրդ տվեց Հորդանանի, Սիրիայի և Եգիպտոսի իշխանություններին մշակել համատեղ պաշտպանության հայեցակարգ: Սակայն թե՛ Եգիպտոսում, թե՛ Սիրիայում և թե՛ Հորդանանում գտնում էին, որ եթե պաղեստինյան ազատագրական շարժմանը տրվեր ազատ գործելու հնարավորություն, ապա իսրայելի հետ պատերազմ սկսելու նախաձեռնությունը կանցներ պաղեստինցիներին: Իսկ դեպքերի նման ընթացքը կհակասեր այդ պետությունների ինքն-իշխանությանը:

1967թ. մայիսին Կահիրեում եղած ժամանակ Հուսեյն թագավորը դժգոհեց Նասերին պաղեստինցի ազատամարտիկների գործունեությունից: Նա նշել էր, որ ՊԱԿ-ը այլևս ազատագրական ճակատ չէ, այլ ընկել է կոմունիստների ազդեցության ներքո և դարձել արաբական միասնության թշնամի՝ պառակտման տարրերի հավաք<sup>23</sup>: Պաղեստինյան կազմակերպությունների մեծամասնության վերաբերմունքը Հուսեյնին փոխադարձ էր. մասնավորապես սիրիա-վետ բոլոր կազմակերպությունները գտնում էին, որ Պաղեստինի ազատագրու-մը հնարավոր կլինի միայն այն ժամանակ, երբ վճռորոշ ճակատամարտի նախօրեին տապալվեն Իսրայելի հարևան արաբական պետությունների «հետադեմ» վարչակարգերը: Նախևառաջ խոսքը Հորդանանում Հուսեյն թագավորի վարչակարգի մասին<sup>24</sup> էր:

Բացի վերոհիշյալ, ինչպես նաև զուտ զաղափարական հակասություններին՝ Հորդանանի և Սիրիայի իշխանությունները միմյանց մեղադրում էին երկուստեք ընդհանրոր ռուսերի աջակցման մեջ: Այդպես, 1966թ. սեպտեմբերին Սիրիայում բացահայտվեց իշխանությունից հեռացված աջ բասսականների կազմակերպած հեղաշրջման փորձ: Դրա պարագլուխներից էր ԲԱԱՍ-ի տարածաշրջանային ղեկավարության նախկին անդամ մայոր Սալիմ Խաթումը: Վերջինիս մեղադրում էին ԿՀՎ-ի հետ համագործակցելու մեջ: Նրան, ինչպես նաև ընդդիմադիրների գրեթե բոլոր ղեկավարներին, հաջողվեց փախչել Հորդանան<sup>25</sup>, ուր ԱՄՆ-ի օգնությամբ նրանք սկսեցին նախապատրաստել զինված ներխուժում դեպի Սիրիա<sup>26</sup>: Այս ամենի մասին հայտնի դարձավ 1967թ. ապրիլին, երբ տեղի ունեցան սիրիա-իսրայելյան ուղղակի ընդհարումներ: Միաժամանակ «մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը խոտովություններ կազմակերպեց Սիրիայում: Սա ազդանշան էր Հորդանանի տարածքից Խաթումի գլխավորած զինված ներխուժման համար, որը, սակայն, հաջողություն չունեցավ, քանի որ Խաթումի զինակիցներից մեկը դավաճանեց վերջինիս և վերադարձավ Սիրիա: Ելույթ ունենալով սիրիական ռադիոկայանով՝ նա հայտարարեց, որ «մուսուլման եղբայրների» կազմակերպած խոտովություններին հետևելու էր Խաթումի զինյալների ներխուժումը, որոնք զինված էին ժամանակակից ամերիկյան զրահատեսակներով և հատուկ պատրաստվածություն էին անցել Հորդանանի տարածքում ԿՀՎ-ի մասնագետների ղեկավարությամբ: Հիշյալ հարձակմանը մասնակցելու էին նաև իսրայելյան զորամիավորումները՝

<sup>22</sup> Տե՛ս Գ. Концельман, Арафат, Ростов-на-Дону, 1997, էջ 70:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 67:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 68:

<sup>25</sup> Տե՛ս "Новейшая история арабских стран 1917-1985", М., 1988, էջ 83-84:

<sup>26</sup> Տե՛ս Լ. Медведко, նշվ. աշխ., էջ 63:

հանդերձավորված Սիրիայի բանակի համազգեստով<sup>27</sup>:

Հնայած վերոհիշյալ բոլոր փաստերին՝ Հուսեյն թագավորը որոշում ընդունեց մասնակցել պատերազմին: Միգուցե այդ որոշումը հետևանք էր նրա երիտասարդ տարիքի և Նասերի ազգայնական գաղափարներով հրապուրվածության, միգուցե նա գնաց այդ քայլին՝ հավատալով արաբական հաղթանակին, իր հետևում զգալով Եգիպտոսի և բազմաթիվ պաղեստինյան կազմակերպությունների աջակցությունը, սակայն ակնհայտ է, որ ամեն դեպքում երկրի իշխանությունը իր ընտանիքի ձեռքում պահելու համար դա միակ ճիշտ որոշումն էր:

Երկու օր տևած մարտերից հետո Հուսեյնը, դաշնակից Իրաքից և Սիրիայից չստանալով անհրաժեշտ աջակցություն, հունիսի 7-ին հայտարարեց կրակի դադարեցման մասին<sup>28</sup>:

Հուսեյն թագավորի որոշումը Եգիպտոսի հետ միասնական ճակատով պատերազմին մասնակցելու վերաբերյալ հանգեցրեց Հորդանանի 1948-1949թթ. զբաղեցրած և 1950թ. ամրագրած տարածքները կորցնելուն, որոնք մինչ այդ մտնում էին Պաղեստինի բրիտանական մանդատի կազմում և ՄԱԿ-ի կողմից նախատեսված էին Պաղեստինի արաբական պետության համար:

Այս կապակցությամբ Հուսեյն թագավորը պատերազմի ավարտից հետո ասաց. «Վի՛վում է, թե ես պատկանում եմ մի ընտանիքի, որը ենթարկվելով Աստծո կամքին՝ պետք է անվերջ տառապի և զրկանքներ հասցնի իր երկրին»<sup>29</sup>:

Պատերազմի հետևանքները սարսափելի էին Հորդանանի համար: Ավելի քան 300 հազար պաղեստինցիներ գաղթեցին Հորդանան՝ կրճատելով Երուսաղեմի և Արևմտյան ափի պաղեստինցի ազգաբնակչությունը 32%-ով<sup>30</sup>: Վերջին հանգամանքը, բացի սոցիալ-տնտեսական ծանր հետևանքներից, բերեց պաղեստինյան ազատագրական կազմակերպությունների առավել արդյունավետ ինքնակազմակերպմանը, ինչը հետագայում Հորդանանը վերածեց իսրայելյան հարձակումների հիմնական թիրախի<sup>31</sup>: 1948-49թթ. արաբա-իսրայելյան պատերազմի տարածքային ձեռքբերումները՝ Արևելյան Երուսաղեմը և Հորդանան գետի ամբողջ Արևմտյան ափը, կարևորվում էին այն բանով, որ այնտեղ էին գտնվում Հորդանանի հիմնական գյուղատնտեսական հողատարածությունները: Այս շրջանները տալիս էին երկրի մրգեղենի և բանջարեղենի 60-65%-ը: Բացի դրանից՝ Արևմտյան ափում էր գտնվում Հորդանանի նոր զարգացող արդյունաբերական հնարավորությունների մոտ 50%-ը, իսկ Երուսաղեմ, Բեթղեհեմ և Արևելյան ափի այլ տեսարժան վայրերի զբոսաշրջիկությունից խոշոր շահույթներ էին ապահովվում երկրի տնտեսությանը<sup>32</sup>: Ընդհանուր առմամբ վերոհիշյալ շրջանները տալիս էին երկրի ՀԱԱ-ի մոտ 38%-ը: Սակայն նշենք, որ չնայած ստեղծված տնտեսական ծանր իրավիճակին, անգամ պատերազմից հետո Հորդանանը, տնօրինելով Արևմտյան ափում կրթական և վակուֆային հարցերը, շարունակում էր իր քաղաքացիական ծառայողներին վճարել թոշակներ և աշխատավարձ<sup>33</sup>:

Պատերազմում կրած պարտությունը Հուսեյնը որակեց արաբների մի շարք սխալների հետևանք՝ նշելով, որ Իսրայելի հետ այս բախումը դեռ վերջինը չէր: Իսրայելի ԱԳ նախարար Էբանը ափսոսանք հայտնեց Հուսեյնի այս հայտարարության համար և նշեց, որ, իր կարծիքով, Հորդանանի առջև այժմ

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 65-66:

<sup>28</sup> Տե՛ս "Энциклопедия военного искусства, войны второй половины XX века", էջ 191-192:

<sup>29</sup> Տե՛ս "Los Angeles Times", King Hussein 1935-1999, 8.02.1999:

<sup>30</sup> Տե՛ս В. Киселев, Палестинская проблема и Ближневосточный кризис, Киев, 1983, էջ 81:

<sup>31</sup> Տե՛ս П. Кальвокоресси, նշվ. աշխ., էջ 489:

<sup>32</sup> Տե՛ս "Jordan, Keys to the Kingdom", էջ 18:

<sup>33</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 20:

ծառայել են բավականին լուրջ խնդիրներ, և վերջինս ցանկանում է սկսել բանակցություններ, մինչդեռ Իսրայելը ունի անսահմանափակ ժամանակ և կարող է սպասել այնքան, ինչքան անհրաժեշտ է<sup>34</sup>: Հուսելը արձագանքեց դրան «Իտյթեր» գործակալությանը տված հարցազրույցով, ուր հայտարարեց, որ եթե Իսրայելը չհամաձայնի գնալ փոխզիջման Հորդանանի հետ հարաբերությունները փակուղուց հանելու հարցում, ապա հնարավոր է նոր բախում: Նա նաև նշել էր, որ Հորդանանը ոչ մի փոխզիջման չի գնա Երուզաղեմի հարցում և առաջարկեց Իսրայելին զորքերը վերադարձնել մինչև հունիսի 5-ը զբաղեցրած դիրքերը<sup>35</sup>:

1967թ. պատերազմից հետո բավականին լուրջ խնդիրներ էին ծառայել նաև Իսրայելի առջև. իր լուծումն էր պահանջում գրավված տարածքներում բնակվող մոտ 845 հազար պաղեստինցիների հարցը: Հորդանանի իշխանության ներքո գտնվելու պարագայում հնարավոր էր վերջիններիս ձուլումը, սակայն, երբ նրանք հայտնվեցին Իսրայելի կողմից գրավյալ վիճակում, նրանց մեջ սրվեցին պաղեստինցի լինելու զգացումը և անկախ պետություն ստեղծելու պահանջը: Այսպիսով, գրավելով Երուսաղեմի հին քաղաքը և հոչակելով այն երկրի մայրաքաղաք, Իսրայելը անհնար դարձրեց հարցի լուծման «հորդանանյան» տարբերակը<sup>36</sup> և միաժամանակ Հորդանանի հետ որևէ խաղաղ համաձայնության կնքումը<sup>37</sup>: Որոշ գիտնականներ սակայն նկատում են, որ պատերազմից հետո Եգիպտոսը և Հորդանանը բանակցելու որոշակի պատրաստակամություն էին հայտնում<sup>38</sup>:

Ինչ վերաբերում է միջազգային հանրությանը, ապա 1967թ. հունիսի 5-ին, պատերազմը սկսելուն պես, ԽՍՀՄ ներկայացուցիչը ՄԱԿ-ի ԱԽ արտահերթ նիստի ժամանակ առաջարկեց պահանջել Իսրայելից ռազմական գործողությունների դադարեցում և զորքերի հետ քաշում զինադադարի գծից: Հունիսի 6-ին ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց 233 բանաձևը, որով պատերազմող կողմերին կոչ արեց դադարեցնել ռազմական գործողությունները, այնուհետև դրան հետևեց հունիսի 7-ի 234 բանաձևը, որով ՄԱԿ-ի ԱԽ-ն հակամարտող կողմերից պահանջեց անհապաղ դադարեցնել ցանկացած ռազմական գործողություն, որպես տարածաշրջանում խաղաղության հաստատման ճանապարհին առաջին քայլ<sup>39</sup>: Իսկ արդեն հունիսի 11-ին ընդունվեց 236 բանաձևը, որը կողմերից պահանջում էր հետ քաշել զորամիավորումները հունիսի 10-ին ժամը 16:30-ին զբաղեցրած դիրքերը: Սակայն ՄԱԿ-ի և ՄԱԿ-ի ԱԽ-ի այս պատերազմի կապակցությամբ ընդունած բանաձևերից ամենահետաքրքրականը նոյեմբերի 22-ի 242 «կոմարոմիսային» բանաձևն էր: Այն նախատեսում էր Արաբական երկրների և Իսրայելի միջև պատերազմի դադարեցում, իսրայելյան զորամիավորումների հետքաշում գրավյալ արաբական տարածքներից, տարածաշրջանի միջազգային ջրուղիներով ազատ անվարկության ապահովում, յուրաքանչյուր երկրի սուվերենության, տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության ճանաչում, անվտանգ և ճանաչված սահմաններում խաղաղ գոյակցություն: Բանաձևը թերի էր այն առումով, որ անգլերեն տարբերակում «իսրայելյան զորամիավորումների հետքաշումը արաբական տարածքներից» արտահայտության մեջ «արաբական տարածքներ» բառակապակցությունը զրրված էր անորոշ հոդով՝ «withdrawal of Israel armed forces from territories occu-

<sup>34</sup> Տե՛ս ТААС, 22.08.67, Атлас No 34, էջ 50-51:

<sup>35</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 50:

<sup>36</sup> Մերձավորարևելյան հակամարտության կարգավորում՝ հորդանանա-պաղեստինյան միացյալ թագավորության ստեղծման միջոցով:

<sup>37</sup> Տե՛ս Дж. Гренвилль, նշվ. աշխ., էջ 464:

<sup>38</sup> Տե՛ս П. Кальвокоресси, նշվ. աշխ., էջ 488:

<sup>39</sup> Տե՛ս «United Nations Resolutions on Palestine and the Arab-Israeli conflict, volume one 1947-1974», Washington, D.C., 1975, էջ 141:

pied in the recent conflict», մինչդեռ ֆրանսերեն տարբերակում այն գրված էր որոշյալ հոդով՝ «des territoires occupés»<sup>40</sup>։ Սակայն անգլերեն տարբերակում այդ անհստակությունը հնարավորություն տվեց Իսրայելին մանրելու, բացի դրանից՝ հիշյալ բանաձևում պաղեստինցիների հարցը ներկայացված էր ընդամենը որպես փախստականների հարց<sup>41</sup>։ Նույն հարցը որպես միմիայն փախստականների հարց էր ընկալում նաև ԱՄՆ-ը, որի նախագահ Ջոնսոնը, դեռ մինչև պատերազմը ունենալով հիմնականում իսրայելամետ խորհրդատուներ և վարելով շեշտված իսրայելամետ քաղաքականություն, պատերազմից հետո, չնայած փորձեց վարել ավելի հավասարակշռված քաղաքականություն, այնուամենայնիվ այդ խնդիրը որակեց ընդամենը միայն որպես փախստականների հարց<sup>42</sup>։

Պատերազմից հետո՝ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, Սուդանի մայրաքաղաք Խարտումում գումարվեց Արաբական պետությունների լիգայի դեկլարանտի 4-րդ հանդիպում, որի ժամանակ որոշվեց տարեկան 135 մլն ֆունտ ստերլինգ հատկացնել Եգիպտոսին և Հորդանանին։ Գումարը վճարելու էին նավթարդյունահանող երկրները՝ Սաուդյան Արաբիան, Քուվեյթը և Լիբիան<sup>43</sup>։ Հորդանանին դա վճարվելու էր որպես Հորդանան գետից դեպի արևմուտք բոլոր գրավված տարածքներից, ներառյալ Երուսաղեմի, զբոսաշրջչիկությունից և ուխտագնացությունից ստացված եկամուտների<sup>44</sup> փոխհատուցում։ Հորդանանի վարչապետ Ահմեդ Տուկանը այս կապակցությամբ հայտարարեց, որ Խարթումի հանդիպումը ամենաօգտակարն էր մինչ այդ կայացած բոլոր արաբական համաժողովներից<sup>45</sup>։

Արաբական երկրների կատարյալ և նվաստացուցիչ ջախջախումը, Իսրայելի կողմից Սինայի թերակղզու, Գազայի գոտու, Հորդանան գետի Արևմտյան ափի ու Արևելյան Երուսաղեմի գրավումը, թվում էր, բացառում էին մոտալուտ նոր արաբա-իսրայելյան պատերազմը։ Իսկ ինչ վերաբերում է պատերազմի հետևանքով առաջացած բազմաթիվ խնդիրների բուն կարգավորմանը, ապա, օրինակ, ԱՄՆ-ի վերլուծաբանները, ներառյալ պետդեպարտամենտում մերձավորարևելյան խնդիրներով բոլոր զբաղվողները, բացառությամբ Քիսինջերի, կարծում էին, որ 6-օրյա պատերազմի արդյունքում տեղի ունեցած տարածքային նոր բաժանումը կպահպանվի տասնամյակներ, որոնց ընթացքում խնդիրը կգտնի իր քաղաքական լուծումը<sup>46</sup>։

Եվ իրոք, պատերազմից հետո առաջ քաշվեցին խնդրի կարգավորման մի շարք նախագծեր, որոնցից ԱՄՆ-ի պետքարտուղար Վիլյամ Ռոջերսի նրբաժանացավ Եգիպտոսի, Հորդանանի և Իսրայելի համաձայնությամբ<sup>47</sup>, սակայն ոչ դա և ոչ էլ մյուս նախագծերը կոչված չէին վերականգնելու Հորդանանի կորուստները պատերազմի ընթացքում և նամանավանդ լուծելու այդ չափազանց բարդ խնդիրը, որի վատ վկայությունն են մերձավորարևելյան հակամարտության այսօրվա զարգացումները։

«Վեցօրյա» պատերազմի արդյունքում Հորդանանի կրած վնասը առավել հաստակական դարձրեց Հաշիմյան միապետական վարչակարգի ձգտումը իս-

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 143։

<sup>41</sup> Տե՛ս "Новейшая история арабских стран 1917-1985", էջ 85-86։

<sup>42</sup> Տե՛ս George Lenczowski, American Presidents and the Middle East, Durham and London, 1990, էջ 114-115։

<sup>43</sup> Տե՛ս Ե. Կարամանոկյան, Արաբական պետությունների լիգայի դեպի արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Եր., 1988, էջ 162։

<sup>44</sup> Տե՛ս Ս. Кальвокоресси, Եշվ. աշխ., էջ 488։

<sup>45</sup> Տե՛ս ТААС 15.08.67, Атлас No 33, էջ 52։

<sup>46</sup> Տե՛ս Е. Примаков, Годы в большой политике, М., 1999, էջ 361։

<sup>47</sup> Տե՛ս "Энциклопедия военного искусства, войны второй половины XX века", Минск, 1998, էջ 198։



րայելի հետ վարել ուրույն, արարական այլ երկրների հետ երբեմն խոր հակասության բերող քաղաքականություն: Դրա վառ ասացույցը եղան 1970թ. «սև սեպտեմբերի» իրադարձությունները, երբ հաշիմյանների վարչակարգի պահպանման գործում մեծ դեր խաղաց Իսրայելի Պետությունը<sup>46</sup>:

**Դ. Ա. ՎԻՐԱԲՅԱՆ - *Участие Иордании в арабо-израильской войне 1967г.*** - Со дня создания Государства Израиль иордано-израильские отношения занимали особое место в ближневосточной системе международных отношений. Арабо-израильская «шестидневная война» 1967 года поставила Иорданию перед непростой дилеммой. Неприсоединение к лагерю арабских стран, возглавленных «прогрессивными» арабскими режимами, в случае возможной арабской победы оставило бы дальнейшую участь Иордании на произвол этих режимов. Израиль, в свою очередь, был заинтересован в решении палестинской проблемы по «иорданскому» варианту.

Иордания все же приняла участие в войне и понесла ощутимый экономический, территориальный и социальный урон. В результате хашемитская династия лишь укрепилась в своем намерении проводить особую, подчас приводившую к конфликту с остальными арабскими странами политику в отношении Израиля. Ярким примером вышесказанного являются события «черного сентября» 1970 года, когда большую роль в деле сохранения хашемитского режима сыграло Государство Израиль.

<sup>46</sup> Տե՛ս Դ. Վիրաբյան, 1973 թ. արաբա-իսրայելյան պատերազմը և Հորդանանի դիրքորոշումը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XIX, Եր., 2000, էջ 112: